



ՀՎԷԷ Հիմնադրամը տեղափոխվել է

Հարգելի գործընկերներ,

Ուրախ ենք տեղեկացնել Ձեզ, որ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը (ՀՎԷԷ) տեղափոխվել է և այսուհետ կգործի Սայաթ-Նովա 29/1 հասցեում: ՀՎԷԷ հիմնադրամում գործում է լաբորատորիա, որտեղ չափվում է լեդ լուսնի ստացնողային լամպերի լուսաէլեկտրական բնութագրերը, լաբորատորիան հնարավորություն ունի իրականացնել խոնավության, ջերմաստիճանի, CO2-ի, լուսավորության մակարդակի չափում հավաստագրում, ինչպես նաև ջերմամեկուսիչ նյութերի ջերմահաղորդման գործակցի որոշում: Լաբորատորիայում ցուցադրված է տեղական արտադրության էներգախնայող նյութեր, որոնք լայն օգտագործվում են շենք-շինություններում էներգախնայողության աշխատանքներ իրականացնելու համար:

Չգազաֆիկացված համայնքներում աշխատանքները սկսված են

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը և «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ը համատեղ իրականացնում են Հայաստանում չգազաֆիկացված համայնքների էներգաարդյունավետության բարձրացման ծրագիր, որի շրջանակներում չգազաֆիկացված համայնքների բնակիչների կողմից միայն հոկտեմբեր ամսվա ընթացքում ստացվել է 110 հայտ, որի ուսումնասիրության արդյունքում տրվել է 106 դրական եզրակացություն, 4 հայտ մերժվել է:

Հանդիպում Գլոբալ Բրիջ դպրոցի աշակերտների հետ

Ս.թ. հոկտեմբերի 26-ին Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի աշխատակիցներ Հրանտ Տեր-Գաբրիելյանը և Նորայր Հարությունյանը դասընթաց անցկացրեցին Գլոբալ Բրիջ դպրոցում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի վերաբերյալ:

Դասընթացի նպատակն էր ավագ դասարանների աշակերտներին ներկայացնել, թե ինչ է նշանակում էներգախնայողությունը, էներգախնայողության ծրագրի շրջանակներում ՀՎԷԷ հիմնադրամի կողմից կատարված աշխատանքները, ինչպես նաև վերականգնվող էներգետիկայի մասին ընդհանուր տեղեկատվություն:

Նմանատիպ դասընթացները կնպաստեն աշակերտների մոտ բարձրացնել էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը:

Ինժեներատեխնիկական խմբի ղեկավար Հրանտ Տեր-Գաբրիելյանը նշեց, որ դասընթացները լինելու են շարունակական:

Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է ընդլայնել ուսումնական հաստատությունների շարքը:



Գերմանահայկական հիմնադրամը, KfW բանկի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի հետ համատեղ իրականացնում է «Աջակցություն էներգախնայողության ֆինանսավորմանը ՓՄՁ-ների ոլորտում» ծրագիրը

Գերմանահայկական հիմնադրամը, KfW բանկի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի հետ համատեղ իրականացնում է «Աջակցություն էներգախնայողության ֆինանսավորմանը ՓՄՁ-ների ոլորտում» ծրագիրը: Ծրագրի նպատակն է աջակցել էներգախնայողության միջոցառումների ֆինանսավորմանը Հայաստանի ՓՄՁ-ներում: Ծրագիրը շարունակվում է և ծրագրի շրջանակներում Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի փորձագետների կողմից իրականացվել է 155 էներգետիկ ուսումնասիրություն:

Ծրագրի շրջանակները`

155 էներգետիկ ուսումնասիրություն, որոնցից`

- 140-ը պարզեցված էներգետիկ ուսումնասիրություն` (ներդրման գումարը ոչ ավել 80 մլն ՀՀ դրամից)
- 11 էներգետիկ ուսումնասիրություն` (ներդրման գումարը 80 մլն ՀՀ դրամից ավել)
- 2 նախնական էներգետիկ գնահատում

Պարզեցված էներգետիկ ուսումնասիրություններից 2-ը ստացել են բացասական եզրակացություն:

Ծրագրի 2016թ. օգոստոսից 2017թ. հոկտեմբերի 31-ը ժամանակահատվածի հիմնական ցուցանիշները.

Դրական եզրակացությամբ հայտերի քանակը`

151 հայտ

Ներկայացված վարկի գումարը`

5,406 մլն. դրամ

ԷԽՄ-ներին ուղղված ներդրումը`

5,263 մլն. դրամ

Ակնկալվող էներգախնայողությունը`

428,647,502 կՎտժ

Էներգաարդյունավետությունը`

37 %

CO₂ արտանետումների կրճատում`

160.147 տոննա

Իրականացված էներգախնայողության ծրագրի արդյունքներ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

ՀՀ պետական տնտեսագիտական համալսարանում էներգախնայողության ծրագրի շրջանակներում կատարվել են էներգախնայողության աշխատանքներ` մասնավորապես փոխվել են` դռներ պատուհաններ, արտաքին ջերմային ցանցի ջերմամեկուսացում, մասնաշենքերի ծածկի ջերմամեկուսացում, երրորդ մասնաշենքի արտաքին պատերի ջերմամեկուսացում, ինչպես նաև կաթսայատաների վերազինում: Այս էներգախնայողության միջոցառումների շնորհիվ շենքում էներգիայի ծախսերի **խնայողությունը կազմում է շուրջ 46%: ՀՊՏՀ պրոոբեկտոր**



Միխայիլ Կարապետյանը նշեց, որ ջերմությունը նախկինի համեմատ ամենաքիչը չորսից հինգ անգամ ավելացել է շենքում, իսկ կատարված էներգախնայողության աշխատանքներից հետո ծախսը ավելի քիչ է: Հիմնովին վերանորոգվել է նաև ԲՈՒՀ-ի կաթսայատունը, որտեղ ջերմություն ապահովող երկու կաթսաներն էլ էներգախնայող են և ավտոմատացված: Խնայող ռեժիմի են բերվել ԲՈՒՀ-ի բոլոր մասնաշենքերը:

ԿԼԻՄԱՅԻ ԳԼՈՒԲԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչ է հայտնի կլիմայի գլոբալ փոփոխության մասին, և ի՞նչ ազդեցություն կարող ենք ակնկալել ապագայում:


Ի՞նչ է կլիմայի փոփոխությունը

Կլիմայի փոփոխությունը Երկրի եղանակային պայմանների երկարատև փոփոխությունն է կամ միջին կլիման՝ ներառյալ ջերմաստիճանը և տեղումները: Թեև կլիման փոխվել է անցյալում, այժմ նկատում ենք, որ այն փոփոխվում է աննախադեպ տեմպով: Մթնոլորտում հավաքված ջերմության պատճառով (հանածո վառելիքի այրում, ծառերի հատում և այլն) գլոբալ միջին ջերմաստիճանը այժմ ավելի արագ է փոխվում, քան անցած առնվազն 1000 տարիների ընթացքում:

Ի՞նչն է առաջացնում կլիմայի փոփոխություն

Կլիմայի միայն բնականոն փոփոխությունները, ինչպիսիք են բնական փոփոխականությունը և հրաբխային ժայթքումները, չեն կարող վերարտադրել ջերմաստիճանի վերջին բարձրացումները: Միայն այն դեպքում, երբ մոդելները ներառում են ջերմոցային գազերի արտանետումների ավելացում մարդկային գործունեության պատճառով, կլիմայի վերջին փոփոխությունները կարող են նման զարգացումներ ունենալ:

ՄԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՎԳՐԱՄԸ



Ինչպե՞ս են փոխվել գլոբալ արտանետումները

Արտանետումները սկսել են թափ առնել արդյունաբերական հեղափոխությունից հետո, սակայն տարեկան արտանետումների աճը 21-րդ դարի առաջին 10 տարիներին գրեթե կրկնապատկվել է 1970-2000թթ. համեմատությամբ:

Վերջին տարիներին նկատելի աճ են գրանցել նաև հանածո վառելիքի և արդյունաբերական արտանետումները, որը 1990 թվականից ի վեր կազմում է շուրջ 63%:

Որո՞նք են ամենախոշոր արտանետող երկրները

1850թ.-ից մինչև 2011 թվականը հինգ խոշոր արտանետողները (ԱՄՆ, Եվրամիություն, Չինաստան, Ռուսաստանի Դաշնություն և Գաբոնիա) միասին կազմում էին համաշխարհային CO₂ արտանետումների երկու երրորդ մասնաբաժինը:

Այժմ Չինաստանը հայտնի է որպես առաջատար արտանետող երկիր: Առաջին եռյակի մեջ են մտնում նաև ԵՄ-ը և Միացյալ Նահանգները: Նրանք մթնոլորտ են բաց թողնում ընդհանուր ջերմոցային գազերի արտանետումների կեսից ավելին: Փոխարենը, 100 ամենաքիչ արտանետող երկրները միասին կազմում են գլոբալ արտանետումների մինչև 3.5%-ը: Համաշխարհային արտանետումների գրեթե երեք քառորդը պատկանում է միայն 10 երկրներին:

Որքան կբարձրանա ջերմաստիճանը

Եթե չլինեին բազմաթիվ երկրների կողմից ընդունված արտանետումների կրճատման պարտավորությունները, որոնք հայտնի են որպես **ազգային նպատակային սահմանված ներդրումներ**, ապա կունենայինք 4-5°C տաքացում: Նույնիսկ եթե այդ պարտավորություններն ամբողջությամբ իրականացվեն, գլոբալ միջին ջերմաստիճանը ըստ մի շարք ուսումնասիրությունների կշարունակի բարձրանալ 2.7-3.7°C մինչև 2100 թվականը:

Կլիմայի փոփոխության ինչպիսի՞ հետևանքներ կան մեր օրերում

ԾՈՎԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ



Կլիմայի փոփոխության ազդեցություններն արդեն տեղի են ունենում և տեղի են ունենում ամենուր: Օրինակ, կլիմայի փոփոխությունը արդեն հանգեցրել է ավելի բացասական, քան դրական ազդեցությունների, որոնք նկատելի են բուսական և կենդանական աշխարհի վրա:

Այսպիսով, սառցադաշտերում և սառցաշերտերում սառույցի հալման, ինչպես նաև օվկիանոսային ջրերի տաքացման արդյունքում, 1993-2015թթ. ընթացքում ծովի մակարդակը բարձրացել է տարեկան միջին 3.4մմ-ով, ինչը ջրհեղեղի և ենթակառուցվածքների վտանգի տակ է դնում ափամերձ համայնքները:

Ինչպիսի՞ ազդեցություններ կունենանք ապագայում

Հետագա ազդեցությունները կորոշվեն արտանետումների մակարդակով և արդյունքում ջերմաստիճանի բարձրացմամբ: Որքան տաքանա ջերմաստիճանը, այնքան ավելի մեծ ազդեցություններ կլինեն և ավելի ցածր կլինի մեր հարմարվելու կարողությունը:

Կա՞ն առաջընթացի նշաններ

Վերջերս մենք ականատես ենք եղել «հանգուցալուծում» նշանին: Ըստ Միջազգային էներգետիկ Գործակալության տվյալների, ածխածնի երկօքսիդի արտանետումները վերջին երեք տարիներին մնացել են անփոփոխ, նույնիսկ այն ժամանակ, երբ համաշխարհային տնտեսությունը աճ է գրանցել: Այս փաստը պայմանավորված է վերականգնվող էներգիայի արտադրության աճով, վառելիքի փոխարինումով ածուխից բնական գազի, էներգախնայողության բարձրացմամբ և այլ փոփոխություններով:

Դեռևս անհայտ է՝ արդյոք սա վկայում է երկարատև դրական տեղաշարժերի մասին: Սակայն մենք պետք է կտրուկ նվազեցնենք արտանետումները, եթե ցանկանում ենք կրճատել կլիմայի վտանգավոր փոփոխությունը և նույնիսկ գոյություն ունեցող արտանետումների նվազեցման պարտավորությունների դեպքում, գլոբալ արտանետումները չեն կարող նվազել մինչև առնվազն 2030 թվականը:

Արդյո՞ք մենք ներդրումներ կատարում ենք լուծումների համար

Վերականգնվող էներգետիկայի ոլորտում գլոբալ ներդրումները 2015 թվականին աճել են մինչև 285.9 մլրդ դոլարով, որը նախորդ տարվա համեմատ աճել է 5%-ով: 2015 թվականին նոր տեղակայված էներգետիկ կայանների հիմնական մասը (շուրջ 54.6%) առաջին անգամ բաժին է հասնում վերականգնվող էներգետիկ աղբյուրներին (բացառությամբ խոշոր հիդրո կայանների): Սա խոսում է այն մասին, որ մենք պետք է ավելի արագ անցում կատարենք հանածո վառելիքներից, եթե ունենք հնարավորություն պայքարելու և նվազեցնելու գլոբալ տաքացումը 1.5-2 °C-ով :

Կլիմայի փոփոխության առավել վտանգավոր ազդեցություններից խուսափելու համար, որը պահանջում է աստիճանաբար դադարեցնել արտանետումները, կպահանջի երկարատև և նպատակային գործողություններ:

*Հեղինակ՝
Գեղամ Կիրակոսյան,
Հայաստանի Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ*



Երևան, Հայաստան Հանրապետություն
Սայաթ- Նովա պողոտա 29/1
Հեռ. /Ֆաքս +374 10 588011
Էլ. հասցե՝ info@r2e2.am
Էլ. կայք՝ www.r2e2.am